П. М. ДЕБИРОВ, Резьба по камню в Дагестане. Москва, 1966. 208 стр.

Հնագետ-արվեստարան Պ. Մ. Դեբիրովի «Резьба по камню в Дагестане» ուշագրավ աշխատությունը տարիների քրտնաջան աշխատանքի արդյունք է:

Այն բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից և վերջաբանից:

Ներածությունում Պ. Դեբիրովը դաղստանյան վիմաքանդակի նմուշները բաժանում է երեք մեծ խմբերի. ա) շենքերը հարդարելու հարտարապետական դեկորների, բ) տապանաքարերի և ուրիշ պաշտամունքային նշանակություն ունեցող հնագիտական նյութերի, գ) կենցաղային նշանակություն ունեցող թեմաների: Դեբիրովը նշում է, որ Դաղստանի արվեստի այս բնագավառն ունի խոր ակունքներ, հանձինս ժողովրդական ավանդությունների, բարքերի, կրոնական հավատալիքների, սիմվոլիկ մտածողության և այլն: Միաժամանակ նա շատ բարձր է գնահատում, այդ շրջանում, հայ և վրաց ժողովուրդների արվեստների դաղստանյան արվեստի վրա ունեցած բարերար ազդեցությունը: Պ. Դեբիրովը 215-ի հասնող լուսանկարները նկարագրելուց զատ, տալիս է հնագիտական նյութերի աստիճանական զարգացման ընթացքը: Դա նրա աշխատության արժանիքներից մեկն է:

Հեղինակը գրախոսվող աշխատության «Դեղարվեստական բանվորների զարգացումը բարի վրա Դաղստանի ժողովուրդների մոտ» գլխում քննում է դաղստանյան ժողովուրդների ստեղծագործության աշխարհագրական միջավայրն ու պատմական պայմանները՝ ցույց տալով, որ զարդաքանդակի զարգացումը ընթացել է պարզից դեպի բարդը:

Պ. Դեբիրովը դաղստանյան զարդաքանդակները բաժանում է չորս հիմնական խմբերի՝ գրաֆիկական կամ պատմողական, երկրաչափական, ժապավենաձև և բուսական: Բնութագրելով առաջին խումբը՝ գրաֆիկականը, նա գտնում է, որ այն շատ բանով է տարբերվում մյուս ինքնուրույն խմբերից ոչ միայն քանդակելու տեխնիկայով, այլև տարբեր այուժեներով և արտահայտած գաղափարներով:

Երկրաչափական քանդակազարդերը աչքի են ընկնում ռիթմի պահպանումով և տարբերվում են ժապավենաձևից նրանով, որ որոշակի սիմվոլիկ իմաստ են արտահայտում: Չորրորդ խումբը՝ բուսական զարդաձևերն աչքի են ընկնում իրենց «ճկուն հորինվածքներով»: Դրանք սիմետրիկ են, ունեն հստակ մոտիվներ, երբեմն նաև ամբողջական հորինվածքներ:

Պ. Դեբիրովը Դաղստանի հնագիտական նյութը քննում է ըստ քաղաքական, տնտեսական և ազգագրական բաժանումների: Դաղստանում կողք-կողքի ապրել և ստեղծագործել են ավելի քան երեսուն ազգություններ: Ըստ նրանց առանձին պատմական և ազգագրական շրջանների էլ ստեղծվել են տարբեր արվեստագիտական դպրոցներ: Այսպես օրինակ, Տաբասարանը եղել է ինքնուրույն ֆեոդալական-քաղաքական միավոր: Եվ քանի որ այս շրջանը միասնական է, ապա զարդաքանդակները ևս միասնական, ամբողջական են. իրարից շատ տարբեր ձևեր այստեղ չեն նկատվում: Քրիստոնեական շրջանի տաբասարանցիների մոնումենտալ շինություններում նկատելի է ժապավենաձև զարդաքանդակների օգտագործում: Տաբասարանցիները քրիստոնեական տաճարաշինությանը ծանոթացել են հարևան Հայաստանի և Վրաստանի ազդեցության ներքո, որտեղից և վերցրել են կառուցողական տեխնիկայի շատ ձևեր: Տաճարների հարդարումը վերաբերվում է ավելի ուշ շրջանի (IX դ.) նախամուսուլմանական արվեստին, որը նույնպես շատ ինքնուրույն ձևեր է ունեցել:

Դաղստանի արվեստում իր ինքնուրույն տեղն ունի նաև ղուբաչիների արվեստը: Լեռնցի ղուբաչիները Դաղստանի դեկորատիվ արվեստին տվեցին բուսական շատ զարդաձևեր (եռատերևներ, ժապավենաձև հյուսվածքներ, բյուզանդական սրմուվներ և այլն), որոնք կազմում են սուսանձին այուժետային խմբեր: Ղուբաչիների արվեստում սիրված մոտիվներ էին սոյուծի, ձիավորի, եղջերուի և քայլող մար-

դու պատկերները: Դաղստանում զարդաքանդակային բոլոր ձևերը կատարելության և զարգացման են հասնում XII—XIV դդ.:

Աշխատության երկրորդ գլուխը նվիրված է Դաղստանի տապանաքարերի քարե քանդակներին, որոնք առանձնահատուկ տեղ են գրավում: Հեղինակը բացահայտելով այդ զարդաքանդակների կիրառական և դեկորատիվ կողմերը, տապանաքարերը բաժանում է երեք մեծ խմբերի՝ ա) անդուկաձև, բ) կոթողաձև և գ) մարդակերպ ուղղահայաց երկարավուն կոթողաձև:

Դեբիրովը հանգամանորեն է խոսում նաև քարի վրա քանդակման տեխնիկայի մասին: Նա ըստ պատմական ժամանակաշրջանի, անդրադառնում է Գիդատլի, հարավային և հյուսիսային Տաբասարանի, ղուբաչի-դարգինների, լաքերի, կումիկների, ավարների արվեստի տարբեր նմուշներին, ցույց տալիս դրանց զարգացման ընթացքը: Դաղստանյան, հատկապես ղուրաչիների մի շարք վարպետներ քաջատեղյակ են եղել արաբական գրերին: Հայտնի են վիմաքանդակողների անունները (Ռաբադան Ռաբադանով և Խամզի Օմարով) ու նրանց ստեղծած քանդակները, որոնք առավել գեղեցիկ են:

Կումիկյան շրջանում լավ պահպանվել են այն քանդակները, որոնք պատկերում են Ղուրանի մոտիվները, ժողովրդի կյանքը ու կենցաղը, սովորույթները:

Առանձնապես հետաքրքրություն են ներկայացնում տապանաքարերի զարդերը. որքան հարուստ է հանգուցյալը, այնքան ճոխ էր նրա տապանաքարը:

Երկրորդ գլխում խոսվում է նաև ժայռապատկերային արվեստի մասին: Դաղըստանի բրոնզեդարյան ժայռապատկերները բովանդակությամբ խորանում են հետագայում՝ VII—XIV դդ., տեղի տալով քանդակների նորանոր խմբերի: Դա Դաղըստանի մշակույթի զարգացման կարևոր ժամանակաշրջանն է, որին հետևում է երրորդ կարևոր շրջանը՝ XV—XVIII դդ., երբ ստեղծվում են Դաղստանի արվեստի, ինքնուրույն, քանդակման դպրոցներ, որոնք ուրույն տեղ ունեն կովկասյան ամբողջ մշակույթի մեջ:

Դաղստանի արվեստի չորրորդ կարևոր շրջանը ընդգրկում է XIX—XX դդ., երբ զարդաքանդակային ձևերը ավելի են մասնատվում և ժողովրդի ծոցից դուրս եկած շատ վարպետներ ստեղծում են իրենց գլուխգործոցները:

Պ. Դեբիրովը հանգում է այն ճիշտ հետևության, որ գիդատլինյան արվեստում «իաչը և քառակուսին ունեն միասնական բովանդակություն» (էջ 66):

Հեղինակը տալիս է երկրաչափական, ժայռավեներձև և բուսական զարդաքանդակների զարգացման առանձին շրջանները և եզրակացնում, որ Դաղստանում հանդիպող քանդակները ունեն շատ հին՝ դարերի խորքը գնացող տեղական կովկասյան շատ ընդհանուր արմատներ:

Քննարկվող թեման և նյութի ընդգրկումը շատ մեծ է և լավ կլիներ, որ աշխատության հեղինակն անդրադառնալով այս կամ այն դարում ստեղծված քանդակներին, տար նաև նրանց բնորոշ բոլոր տարբերակները: Ցույց տալով հանդերձ, որ ըստեղծված բազմաթիվ զարդերը ունեցել են որոշակի սիմվոլիկ իմաստ, սիմվոլները բացատրում է շատ թռուցիկ և վերջնական եզրակացության չի հանգում:

Ներկայացված բազմաթիվ նյութերի մեջ ուշագրավ է այն, որ հանդիպում են հայկական արվեստին պատկանող խաչքարեր՝ իրենց զարդամոտիվներով և հայերեն լեզվով գրված արձանագրություններով: Հեղինակը դրանք ներկայացնում է իբրև Դաղստանի արվեստի նմուշներ (տե՛ս գրախոսվող աշխատության նկ. նկ. 61, 62 և 63), մինչդեռ հյուսվածքաձև բանդակված նմանատիպ խաչքարերն իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն Հայաստանում: Նյութը այս ձևով ներկայացնելը մեր կարծիքով ճիշտ չէ: Դա ըստ երևույթին հետևանք է այն բանի, որ հեղինակը ծանոթ չէ Ս. Բարխուդարյանի «Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ» աշխատությանը:

Նա ժայռապատկերները թվագրում է բրոնզե դարով, այնինչ Հայաստանում և այլուր հանդիպում են ժայռապատկերների այնպիսի խմբեր, որոնք թվագրվում են ավելի վաղ, քան բրոնզե դարն է: Մասնագետները ժայռապատկերները վերագրում են միջին քարի դարի վերջին և նոր քարի դարի սկզբին: Դաղստանի ներկայացված նյութի մեջ ևս կան շատ հին ժայռապատկերներ:

Մասնակի այս դիտողությունները չեն նվազեցնում Պ. Դեբիրովի աշխատությունը, որն անկասկած շատ արժեքավոր է իր տեսակի մեջ:

Հ. Ա. ԱՍՄԱՐՅԱՆ